ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՑԱՐՁԱԿ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ XVIII ԴԱՐԻ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ժ. Հ. ԱՆԱՆՅԱՆ

XVIII դարի հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների հարցերի բազմակողմանի ուսումնասիրության և այդ թեմայի որոշ տեսական կողմերի լուսաբանման համար արխիվային նյութերի ու այլ աղբյուրների հետազոտման հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև XVIII դարի Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը լուսաբանող հատուկ գրականության խոր իմացություն։

XVII—XVIII դդ. Ռուսաստանի սոցիալ-տնտեսական պատմության հարցերը հետազոտվել են սովետական այնպիսի ականավոր պատմաբանների աշխատություններում, ինչպիսիք են Ն. Ս. Դրուժինինը, Ս. Մ. Տրոիցկին. Ս. Յա. Բորոզդինը, Ա. Ա. Պրեոբրաժենսկին, Ն. Ի. Պավլենկոն, Մ. Յա. Վոլկովը, Յու. Ա. Տիխոնովը, Ա. Ի. Յուխտը և ուրիշներ։ XVIII դարի հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերություններն ուսումնասիրող յուրաքանչյուր հետազոտող պետք է քաջ ծանոթ լինի այդ գիտնականների աշխատություններին։ Սույն թեմայի որոշ հարցերի իմաստավորման համար անհրաժեշտ է բացահայտել սովետական ռուսական պատմագրության առաջադրած դրույթների նշանակությունը։ Սերկա հոդվածում մենք գիտակցաբար նեղացնում ենք խնդիրը, առանձնացնելով լոկ հարցերի մի խումբ, որոնք բխում են ռուսական մերկանտիլիզմի պատմության, ռուսական բացարձակ միապետության ֆինանսական քաղաքականության և, վերջապես, XVIII դարի ռուսական բացարձակ միապետության և ազնվականության փոխհարաբերությունների պատմության պրոբլեմներից։ Մեր նպատակն է ցույց տալ, թե ինչպես են այդ պրոբլեմները տեսական առումով արտացոլվում XVIII դարի հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների պատմության որոշ հարցերին նվիրված ուսումնասիրությունների մեջ։ Նկատենք, որ Ռուսաստանում բացարձակ միապետության պատմությունն առավել ամբողջական ձևով ուսումնասիրված է Ս. Մ. Տրոիցկու աշխատություններում[1]։ *Այդ իսկ պատճառով մենք սահման կվկայակոչենք մասնավորապես նրա աշխատությունները*[2]։

Ռուսական բացարձակ միապետության պատմությունն ուսումնասիրելիս, հենվելով Ֆ. Էնգելսի «Անտի-Դյուրինգի» այն դրույթի վրա, որի համաձայն ձևավորվող բուրժուազիան երկար ժամանակաշրջանի ընթացքում ազնվականության դեմ պայքարում էր գերազանցապես տնտեսական բնագավառում[3] *և*

---

[1] *Ս. Մ. Տրոիցկու (1930—1976) ստեղծագործության և կյանքի ուղու մասին տե՛ս* А. А. Преображенский. Сергей Мартынович Троицкий.—История СССР. 1976, № 6, с. 235—236; А. И. Юхт. О научном наследии С. М. Троицкого.—Исторические записки, т. 98, М., 1977, с. 341—360.

[2] *Տե՛ս* С. М. Троицкий. Финансовая политика русского абсолютизма в XVIII в. М., 1968; он же: Русский абсолютизм и дворянство в XVIII в. Формирование бюрократии. М., 1974; он же: Россия в XVIII веке. Сборник статей и публикаций, М., 1982.

[3] *Այստեղ մենք պետք է նկատենք, որ ինչպես իրավամբ նշում են հետազոտողները, Ռուսաստանի պատմության որոշ ժամանակաշրջաններում «բուրժուական տարրերը ստիպված էին քաղաքական առումով փոխհամաձայնության գալ ազնվականության հետ որպես ցարի բացարձակ*

որ բուրժուազիայի թուլությունը գոյության վաղ փուլերում նրան դաշինքի էր մղում ցարական իշխանության հետ[4], Ս. Մ. Տրոիցկին հանգում է արժեքավոր եզրակացության. XVII—XVIII դդ. ռուսական բացարձակ միապետությունը ստիպված էր հայտնի չափով հաշվի առնել ձևավորվող բուրժուազիայի կարիքները և նկատի ունենալ նրա աստիճանաբար աճող տնտեսական ուժը։ Այդ մասին վկայում են բազմաթիվ փաստեր, բայց տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է դրանցից միայն մեկը՝ քաղաքների պոսադի (արվարձանային) արհեստավորական բնակչության և վաճառականության ելույթները՝ օտարերկրյա վաճառականների մրցակցությունը վերացնելու և մաքսային օրենսդրությունը բարելավելու պահանջներով։

Հայտնի է, որ ռուսական կառավարությունը ստիպված էր հնարավորության սահմաններում բավարարել այդ պահանջները։ Ալեքսեյ Միխայլովիչի կառավարության քաղաքականության մեջ երևան են գալիս մերկանտիլիզմի միանգամայն նկատելի գծերը։ Հետաքրքիր է նշել, որ մերկանտիլիզմի առաջին գաղափարախոսներից մեկը Ա. Լ. Օրդին-Նաշչոկինն էր՝ 1667 թ. նոր առևտրական կանոնադրության հեղինակը, կանոնադրություն, որի մեջ օրենսդրորեն ամրագրվել էին մասնավորապես հայ վաճառականների արտոնությունները։ Այդ առումով հարկ է ընդգծել, որ Օրդին-Նաշչոկինից սկսած ռուսական մերկանտիլիզմի զարգացումը ընթացավ առանձնահատուկ ուղիով. այն է՝ այդ քաղաքականությունը երկակի նպատակ էր հետապնդում։ Այն ապահովում էր ոչ միայն ակտիվ առևտրական հաշվեկշիռը և Ռուսաստանի տնտեսությունն անջրպետում էր արտաքին ազդակներից, այլև, դրա հետ միասին, XVII—XVIII դդ. ռուսական վաճառականության և ձեռնարկատիրության բացահայտ թուլության հետևանքով ներգրավում էր հայ (և ոչ միայն հայ) վաճառականների ու ձեռնարկատերերի (որոնք, վերջին հաշվով, չէին կարող մրցակից դառնալ սաղմնավորվող ռուսական բուրժուազիայի համար) կապիտալը, որի շնորհիվ ռուսական տնտեսության կարևոր զարկերակները՝ առևտուրն ու արդյունաբերությունը, լրացուցիչ սնունդ էին ստանում։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ հայ և որոշ այլ արևելյան վաճառականների նկատմամբ հովանավորման քաղաքականությունը, սկսած Ալեքսեյ Միխայլովիչից ընդհուպ մինչև Պյոտր I-ը և ավելի, հանդիսանում էր ռուսական կառավարության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը, որում նշանակալից տեղ էր հատկացվում մերկանտիլիզմին։

Այստեղ մենք պետք է հետազոտողների ուշադրությունը հրավիրենք հետևյալի վրա։ Հայտնի է, որ հայ և ռուս վաճառականների միջև առևտրական կապեր գոյություն ունեին սկսած Կիևյան Ռուսիայի ժամանակներից, ինչպես և հետո՝ XIV—XVI դդ. Մոսկովյան պետության կազմավորման ժամանակաշրջանում։ Սակայն այդ կապերն այն ժամանակ տնտեսական հարաբերությունների կերպարանք չստացան։ Հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունները առաջացան միայն XVII դարում, ռուսական պատմության «նոր ժամանակաշրջանի» սկզբին՝ կապված ազգային շուկայի և կապիտալիստական հարաբերությունների ծագման և մերկանտիլիզմի քաղաքականության կիրառման հետ[6]։ Ինչպես հայտնի է, Կ. Մարքսը ցույց է տվել, որ

իշխանության գլխավոր հենարանի»։ Մեր կարծիքով դրանում է կայանում ֆեոդալական Ռուսաստանի քաղաքական զարգացման առանձնահատկություններից մեկը. տե՛ս Е. И. Индова, А. А. Преображенский, Ю. А. Тихонов. Народные движения в России XVII—XVIII вв. и абсолютизм. В кн.: «Абсолютизм в России» (XVII—XVIII), М., 1964, с. 85.

4 *Տե՛ս* К. Маркс, Ф. Энгельс. Соч., 2-е изд., т. 20, с. 167—168.

5 *Տե՛ս* К. В. Базилевич. Элементы меркантилизма в экономической политике Алексея Михайловича.—Ученые записки МГУ, вып. 41, М., 1940.

6 *Տե՛ս* В. И. Ленин. Полн. собр. соч., т. I, с. 153—154.

մերկանտիլիզմի գաղափարների ի հայտ գալը կապված է կապիտալիզմի ծագման հետ[7]։

Հետազոտելով Ռուսաստանում կապիտալիզմի ծագման ընթացքը, Ս. Մ. Տրոիցկին գրել է. «XVII—XVIII դդ. Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացման բնորոշ գիծը ֆեոդալական-ճորտատիրական հասարակարգի ընդերքում կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորումն էր... Միաժամանակ տեղի էր ունենում ճորտացման ուժեղացում և նրա ընդարձակում «լայնությամբ» (այն տարածելով երկրի նոր տերիտորիաների և բնակչության նոր կատեգորիաների վրա»)[8]։

Նա համոզիչ ցույց է տվել, որ բուրժուական հարաբերությունների զարգացումը XVIII դարի 50—60-ական թթ. հանգեցրեց Ռուսաստանի տնտեսության մեջ կապիտալիստական կացութաձևի կազմավորմանը։ Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բարդ և հակասական բնույթն արտացոլվել է նաև ռուսական կառավարության ֆինանսական քաղաքականության մեջ։

Ս. Մ. Տրոիցկու վերջին հոդվածներից մեկում[9] քննարկված են բացարձակ միապետության դեմ աղնվականության կողմից հանուն իր դասային իրավունքների մղած պայքարի հետ կապված հարցեր։ Այդ աշխատությունը ուշագրավ է 1762 թ. փետրվարին աղնվականների իրավունքների մասին մանիֆեստի հրապարակումից անմիջապես հետո Եկատերինա II-ի կառավարության կողմից տիրապետող դասակարգի դասային իրավունքների և արտոնությունների մասին օրենսդրության մշակման պատմության ուսումնասիրության առումով։ Հատուկ հանձնաժողով կազմելու մասին Եկատերինա II-ի որոշման վրա, այլ հանգամանքների հետ մեկտեղ, աղդեց և այն, որ մեծատոհմիկ աղնվականների մի խումբ (Վորոնցով եղբայրներ, Յա. Պ. Շախովսկոյ և ուրիշներ) հանդես եկավ վաճառականության և քաղքենիության շահերի նշանակալի նվազեցման հաշվին աղնվականության արտոնությունների ընդլայնման նախագծով, որը կարող էր հանգեցնել պետության թուլացմանը[10]։

Վերը հիշատակված «Комиссия о вольности дворянства» աշխատության մեջ Ս. Մ. Տրոիցկին ցույց է տվել, որ աղնվականության գաղափարախոսները պետության և հասարակության մեջ իրենց դասի դերը գնահատելիս փորձում էին որոշել նաև աղնվականության տեղը երկրի տնտեսական կյանքում։ Իր ժամանակի համար դա նոր միտք էր[11]։ Այնուհետև հեղինակը գրում է, որ «ներքին շուկայի և կապիտալիստական կացութաձևի հաստակ գծագրվող պրոցեսի պայմաններում աղնվականության դասի գաղափարախոսները միապետության առջև հարց էին բարձրացնում ամենից առաջ տնտեսական ոլորտում իրենց դասային արտոնությունների ընդլայնման և ամրապնդման համար, որտեղ նրանք չափազանց սուր ձևով էին զգում վաճառականների, քաղքենիների»[12] և այլոց մրցակցությունը։

Այլ պատճառների թվում, որոնցով պայմանավորված էին մեծատոհմիկ վերնախավի ելույթները աղնվականության դասային արտոնությունները ամրապնդելու և ընդարձակելու ծրագրով, Ս. Մ. Տրոիցկին առանձնացնում է հետևյալները. ձևավորվող բուրժուազիայի կողմից աճող մրցակցությունը տրանսեական մարդում և աղնվականության աղքատացումն ու քայքայումը։

---

7 Տե՛ս К. Маркс, Ф. Энгельс. Соч., 2-е изд., т. 13, с. 139—140, т. 24, с. 71—72.

8 С. М. Троицкий. Финансовая политика..., с. 4.

9 Տե՛ս С. М. Троицкий. Комиссия о вольности дворянства 1763 г. (К вопросу о борьбе дворянства с абсолютизмом за свои сословные права). В кн.: С. М. Троицкий. Россия в XVIII в., с. 140—192.

10 Նույն տեղում, էջ 145։

11 Նույն տեղում, էջ 179։

12 Նույն տեղում, էջ 179—180։

Վ. Մ. Կաբուզանի հեղինակակցությամբ գրված իր մյուս աշխատության մեջ Ս. Մ. Տրոիցկին կոնկրետ հաշվարկումների հիման վրա ցույց է տվել, որ սկսած XVIII դարի երկրորդ կեսից տեղի էր ունենում երկրի բնակչության մեջ ազնվականության տեսակարար կշռի աստիճանական անկում[13]։ Ֆեոդալական հարաբերությունների քայքայման պայմաններում ազնվականական կալվածքների եկամտաբերության բարձրացման հնարավորությունները գրեթե սպառվել էին։ Կալվածատերերի պարազիտիզմը, որոնք անարտադրողաբար վատնում էին հսկայական գումարներ, դրսևորվում էր ազնվականության պարտապանության արագ աճի մեջ։ Օրինակ, Դեմիդովների (որոնց 1790 թ. անձնական ծախսերը կլանեցին այդ տարվա ամբողջ եկամուտը) 1794 թ. պարտքը հասնում էր 818 հազ. ռուբլու[14]։ Դրա հետ մեկտեղ, ինչպես ցույց են տալիս Ե. Ի. Ինդովայի, Ա. Ա. Պրեոբրաժենսկու և Յու. Ա. Տիխոնովի հետազոտությունները, XVIII դարի վերջին քաղաքացիական առևտրաձեռնարկատիրական վերնախավն ամրապնդվում է[15]։

Ռուսական սովետական պատմաբանների առաջադրած դրույթներն օգնում են ավելի խոր ըմբռնել մի շարք սոցիալական երևույթներ, որոնք տեղի են ունեցել XVIII դարի կեսերի և երկրորդ կեսի ֆեոդալական Ռուսաստանի տնտեսական կյանքում։ Նշված ժամանակաշրջանում Եկատերինա II-ի կառավարությունը ձեռնարկում է մի շարք միջոցառումներ, նպատակ ունենալով երկրի տնտեսական կյանքում բարձրացնել ազնվականության տեսակարար կշիռը։ Այդ միջոցառումներից էր վաճառականության վերնախավի առավել հարուստ ներկայացուցիչներին ազնվականական տիտղոսներ շնորհելը։ Ինչպես ճիշտ նկատել է Մ. Պ. Պավլովա-Սիլվանսկայան, գործարանատերերի և վաճառականների առավել հարուստ մասը նեղվում էր իր դասային անլիարժեքությունից, ձգտելով բոլոր արդար և անարդար միջոցներով ազնվականի կոչում ստանալ։ Տիրապետող դասակարգին պատկանելը նրանց համար միայն անձնական պատվասիրության հարց չէր։ Սեփականության ֆեոդալական ձևերի տիրապետության առկայության պայմաններում չտիրապետելով հողերի և բանվորական ձեռքերի, նրանք չէին կարող շարունակել իրենց արտադրության զարգացումը[16]։ Այստեղ, սակայն, մենք պետք է նկատենք, որ որոշ վաճառականներ ու ձեռնարկատերեր ձգտում էին ոչ թե ազնվականի կոչում ստանալուն, այլ նրա վերականգնմանը։ Ինչպես վկայում է Ն. Ի. Պավլենկոն, առաջին անգամ ազնվականի կոչման վերականգնման միտքը համակել է «ձեռնեռեց հայ վաճառական Լազար Լազարևին[17] և Թոմա ու Ակիմ Մալցևներին»[18]։ 1774 թ. մայիսի 20-ին Լազարևների ամբողջ ընտանիքին տրվեց ազնվականական կոչում, Մալցևներն իրենց ազնվական ծագումը «վե-

---

13 Տե՛ս В. М. Кабузан, С. М. Троицкий. Изменения в численности, удельном весе и размещении дворянства в России в 1782—1858 гг.—История СССР, 1971, № 4, с. 161—168.

14 Տե՛ս М. П. Павлова-Сильванская. К вопросу о внешних долгах России во второй половине XVIII в. В кн.: Проблемы генезиса капитализма. К международному конгрессу экономической истории в Ленинграде в 1970 г., М., 1970, с. 329.

15 Տե՛ս Е. И. Индова, А. А. Преображенский, Ю. А. Тихонов. Народные движения в России..., с. 50—92.

16 Տե՛ս М. П. Павлова-Сильванская. Социальная сущность областной реформы Екатерины II. В кн.: Абсолютизм в России, с. 482.

17 Ինչ վերաբերում է Լազարևներին, ապա հայտնի է, որ Ռուսաստանում նրանք դիմել էին ռուսական սրքունիքին, խնդրելով իրենց ռուսական ազնվականի կոչում տալ, ապացուցելով, որ իրենց նախնիները եղել են ազնվականական տոհմից, որոնք Շահ Աբասի կողմից վերաբնակեցվել են Իրանում։ Լազար Լազարևի վավերագրական ապացույցները հավաստված էին Վրացական թագավոր Թեյմուրազի և հայոց կաթողիկոսի կողմից։

18 Н. П. Павленко. История металлургии в России XVIII века, М., 1962, с. 505.

բականդնեցին» 1775 թ. օգոստոսի 14-ին[19]։ Այսպիսով, հայազգի լաղարևները Ռուսաստանում ազնվականի կոչում ստացած առաջին վաճառականներից էին։

Ռուսական ազնվականի կոչումը լաղարևներին թույլ տվեց Պերմի նահանգում գնել լեռնագործարանային կալվածքներ՝ ճորտ գյուղացիների հետ միասին։ Դա վաճառականների համար լիարժեք ձեռնարկատերեր դառնալու առավել հեշտ ուղին էր, քանի որ վաճառականները, ինչպես արդեն նշվեց, իրավունք չունեին ձեռնարկության համար ճորտեր գնել։ Ազատորեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար հայ վաճառականները ստիպված էին լինում ամեն անգամ ռուսական կառավարության հատուկ թույլատվությունը խնդրել։ Մենք համաձայն ենք Վ. Ա. Դիլոյանի հետ, որը նշում է, թե լաղարևները, ձեռք բերելով ուրալյան գործարանները, թողարկվող արտադրանքը ավելացնելու նպատակով կենսագործեցին մի շարք միջոցառումներ, որոնցում երևում էին արտադրության կապիտալիստական արտադրանքի նախանշանները[20]։ Շահագրգռված լինելով գյուղացիներին ոլխովին գործարանային աշխատանքների մեջ ընդգրկելու խնդրով, լաղարևները կալվածատիրական հողերը բաժանեցին իրենց գյուղացիներին, վերացրին ընամթերքով հարկերն ու ձիաբուծարանները. և այդ ամենը նպատակ ուներ գյուղացիներին գործարաններում աշխատելու հնարավորություն տալ։

Լաղարևների արդյունաբերական գործունեության հաջողությունները տրամաբանորեն էին։ Տիրելով ավելի քան տաս հազար գյուղացիների, նրանք հմտորեն օգտագործում էին ոտշինային տնտեսության ռեսուրսները՝ արդյունաբերության զարգացման համար։ Լաղարևների գործարանները սալիս էին պերմյան խմբի բոլոր 18 գործարանների ձուլած չուգունի մոտ $^1/_3$-ը։ Ինչպես վկայում է Ն. Ի. Պավլենկոն, «Իվան Լաղարևը Ռուսաստանում միակ արդյունաբերողն էր, որը XVIII դարի վերջին երկու տասնամյակների ընթացքում կրկնապատկեց ձեռնարկությունների թիվը»[21]։

Լաղարևների ընտանիքի ձեռնարկատիրական գործունեության պատմությունը վկայում է, որ XVIII դարի երկրորդ կեսերից սկսվում է ռուսական տնտեսության մեջ հայ վաճառականության վերնախավի աստիճանական ներաճման (հարմարման) ընթացքը, որը հանգեցրեց հայ առևտրական կապիտալի ավելի արագ վերաճմանը արդյունաբերականի։ Ընդ որում, եթե այդ պրոցեսը XVIII դարի առաջին կեսին նոր էր միայն նկատվում և ընդգրկում էր գերազանցապես հայկական գաղութները, ապա XVIII դարի վերջին երեսնամյակում այն արդեն ավարտվել էր և հայ վաճառականների կապիտալը դուրս էր եկել այն տնտեսական կենտրոններից, որտեղ ավանդաբար ծավալվում էր հայերի ձեռնարկատիրական գործունեությունը։ Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ Ն. Ի. Պավլենկոն Լաղարևների նախասկզբնական կապիտալի ծագումը համարում է մասամբ ոչ ռուսական, իսկ մասամբ՝ ռուսական[22]։

Լաղարևների մասին խոսքը հարկ է ավարտել հետևյալ նշումով. այդ հայկական գերդաստանի տնտեսական գործունեության օրինակը լրացուցիչ հավաստում է Ս. Մ. Տրոիցկու գլխավոր դրույթներից մեկը, որի համաձայն Ռուսաստանում ֆեոդալաճորտատիրական հասարակարգի ընդերքում կապի-

---

19 Նույն տեղում, էջ 506։

20 Տե՛ս Վ. Ա. Դիլոյան. Լաղարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես). Երևան, 1966։

21 П. И. Павленко. История металлургии..., с. 410—411. Այդ նույն հեղինակը նշում է, որ Ռուսաստանի մետալուրգիական արտադրության մեջ 1795 թ. արդյունաբերական ձեռնարկությունների և արդյունաբերական արտադրանքի հիմնական զանգվածը կենտրոնացած էր վաճառականներից սերված գործարանատերերի ձեռքում, որոնք կարողացել էին ազնվականություն ստանալ։ Նույն տեղում, էջ 516—517։

22 Նույն տեղում, էջ 407։

տալիստական հարաբերությունների սաղմնավորումը տեղի է ունեցել ավելի վաղ, քան կարծում են առանձին հետազոտողներ[23]։

Հայ և ռուս վաճառականության փոխհարաբերությունների որոշ առանձնահատկությունների պարզաբանման առումով անհրաժեշտ է նկատի ունենալ ազնվականական պետության քաղաքականությունը գյուղացիական առևտրի նկատմամբ։ Հետազոտելով այդ քաղաքականությունը (հարկ է նկատել, որ այստեղ հաճախ էին ընդհարվում Ռուսաստանի տարբեր խավերի, ինչպես նաև պետության հակադիր շահերը, որը ձգտում էր առևտրի ընդարձակումով ավելացնել իր եկամուտները), Ս. Մ. Տրոիցկին վերլուծում է այդ հարցում Գ. Ն. Տեպլովի՝ Եկատերինա II-ի վստահելի խորհրդականներից մեկի դիրքը[24]։ Բնութագրելով XVIII դարի կեսերին ռուսական վաճառականության վիճակը, Գ. Ն. Տեպլովը նշում էր նրա սակավարվությունը, փորձի, գիտելիքների և կապիտալի պակասը։ Նրա կարծիքով, վաճառականության մեծամասնությունը շահագրգռված էր գյուղացիական առևտրի պահպանմամբ և զարգացմամբ, այն ժամանակ, երբ վաճառականության վերնախավը, պաշտպանելով իր դասային շահերը, պայքարում էր գյուղացիական առևտրի արգելման համար։

Այսպիսով, այստեղ մենք տեսնում ենք, որ ռուսական վաճառականության տարբեր խավերի շահերը չէին համընկնում։ Այդ իրողությունը բանալի է տալիս բացահայտելու հայ վաճառականների հետ ռուսական վաճառականության վերնախավի մրցակցային պայքարի մեխանիզմը։ Պաշտպանելով իրենց դասային շահերը, վաճառականների այդ կատեգորիան միևնույն հեռանկարությամբ հանդես էր գալիս ինչպես առևտուր անող ռուս գյուղացիների, այնպես էլ օտարերկրյա կամ արևելյան վաճառականության դեմ՝ թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքերում աջակցության համար դիմելով բացարձակ միապետությանը։ Սակայն վերջինս բոլոր դեպքերում չէ, որ ընդառաջ էր գնում վաճառականության վերնախավի ցանկություններին։ Սաղմնավորվող ռուսական բուրժուազիայի նկատմամբ իր վերաբերմունքում այն ամենից առաջ ելնում էր պետության տնտեսական շահերից։ Եկատերինա II-ը համակրանքով էր վերաբերում Գ. Ն. Տեպլովի հայացքներին, որը հասկանում էր պետության քաղաքականության մեջ երկրի տնտեսական զարգացման օբյեկտիվ ընթացքի ավելի խոր հաշվառման անհրաժեշտությունը, որը նախատեսում էր գյուղացիական առևտրի համար ավելի բարենպաստ գործոնների ստեղծման անխուսափելիությունը։

Ինչ վերաբերում է հայ վաճառականությանը, ապա հարկ է նկատել, որ սկսած տակավին Ալեքսեյ Միխայլովիչ ցարից, հայ վաճառականության նրկասմամբ ռուսական բացարձակ միապետության հովանավորման քաղաքականության հիմքում ընկած էին ամենից առաջ պետության տնտեսական շահերը։ 1667 և 1673 թթ. Ջուղայի հայկական առևտրական ընկերության հետ մոսկովյան կառավարության պայմանագրերի կնքումից առաջ ռուսական վաճառականության բողոքները բացատրվում են նրանով, որ այն, պաշտպանելով սեփական դասային շահերը, միևնույն ժամանակ գերագնահատում էր իր ռեալ հնարավորությունները։ Մոսկովյան և աստրախանյան վաճառականների դժգոհությունը ուներ խիստ սուբյեկտիվ ենթատեքստ և բոլորովին էլ ռուսական վաճառականների նկատմամբ Ջուղայի հայերի վերաբերմունքի ար-

---

23 *Ռուսաստանում կապիտալիզմի ավելի ուշ զարգացման տեսակետը առավել ամբողջական ձևով շարադրված է Ի. Ֆ. Գինդինի, Լ. Վ. Դանիլովայի, Ի. Դ. Կովալչենկոյի, Լ. Վ. Միլովի, Ա. Պ. Նովոսելցևի, Ն. Ի. Պավլենկոյի, Մ. Կ. Ռոժկովայի և Պ. Գ. Ռինձյունսկու «Ռուսաստանի անցումը ֆեոդալիզմից կապիտալիզմին» կոլեկտիվ զեկուցման մեջ. տե՛ս* Переход от феодализма к капитализму в России. Материалы всесоюзной дискуссии. М., 1969, с. 5—103.

24 *Տե՛ս* С. М. Троицкий. Обсуждение вопроса о крестьянской торговле в Комиссии о коммерции в середине 60-х годов XVIII в. В кн.: С. М. Троицкий. Россия в XVIII в., с. 204—216.

դասիքը չէր[25]։ Դա հիանալի էր հասկանում Ալեքսեյ Միխայլովիչի կառավարությունը, իսկ հետագայում նաև՝ Պյոտր I-ը։ Այդ իսկ պատճառով պայմանագրերը կազմելու ժամանակ ռուսական վաճառականների բողոքները հաշվի չէին առնվում։ Մոսկովյան արքունիքը լավ գիտեր, որ այդ պայմանագրերը պետությանը կարող են տնտեսական շահ բերել, քանի որ ռուսական վաճառականությունը XVII դարի երկրորդ կեսին դեռ ի վիճակի չէր իր ուսերին կրելու արևելյան առևտրի և, մասնավորապես, մետաքսի առևտրի ողջ ծանրությունը։ Այն ժամանակ, երբ ռուսական վաճառականությունը միայն նոր էր ուժ հավաքում, պետությունը մի շարք ապրանքների վաճառքը դարձրեց իր մենաշնորհը։ Այդ երևույթը տեղի ունեցավ արդեն XVII դարի երկրորդ կեսին[26] և հատկապես աճեց XVIII դարի առաջին երեսնամյակում։ Պետությունն իր մենաշնորհը իրագործում էր նաև անմիջականորեն։ Կառավարական հաստատությունները ապրանքներ էին վաճառում առանձին արտահանողների կամ ընկերությունների։ Արտահանության հիմնական ապրանքներն ընկնում էին օտարերկրացիների ձեռքը։ Այդ անձանցից շատերը արևմտաեվրոպական ընկերությունների գործակալներ էին։ Ռուսական արքունիքում տարածված յուրօրինակ ֆավորիտիզմը, նույն անձանց կողմից պետական ապրանքներով առևտրի և պետական կապալների զավթումը հարուցում էր ոչ միայն ռուսական, այլև այն օտարերկրյա վաճառականների սուր դժգոհությունը, որոնք չէին մտնում ընտրյալների սահմանափակ շրջանակի մեջ[27]։

1727 թ. առևտրի հանձնաժողովին տված իրենց «Առաջարկություններում» պետերբուրդյան վաճառականները գրում էին. «Օտարերկրացիները իրավասու չեն ունենալու պետական կապալներ և գնումներ»։ Պայքարելով հանուն ամեն տեսակի մենաշնորհների վերացման, այդ թվում և ռուսական վաճառականների համար, նրանք նշում էին, որ «եթե ամեն մի առևտուր լինի շատ ձեռքերում, ապա ռուսական վաճառականները մյուս երկրներում էլ փառավոր վիճակում կլինեն»[28]։ Դա արդեն բողոք էր, չնայած և թույլ, բայց բոլոր դեպքերում ակա էր վաճառականության դժգոհությունը տարբեր տեսակի սահմանափակումներից, այդ թվում առևտրի պետական մենաշնորհից։

Սակայն այստեղ ուշագրավ է հետևյալը։ Հենց այդ նույն ժամանակաշրջանում, երբ ռուսական վաճառականությունը հանդես էր գալիս առևտրի մեջ օտարերկրացիների և սեփական պետության մենաշնորհի դեմ, ռուսական վաճառականության մի մասը (հիմնականում այն, որը կապված էր Ռու-

25 Ն. Դ. Կուկանովան «Ռուսաստանի և Իրանի տնտեսական հարաբերությունները XVII—XIX դդ. առաջին կեսին» դոկտորական դիսերտացիայում Ջուղայի և Անդրկովկասի հայերի առևտրական գործունեության մասին անելով մի շարք հետաքրքիր դիտումներ և ուշադրության արժանի եզրահանգումներ, սխալմամբ եզրակացնում է, որ «Ջուղայի ընկերությունը խոշընդոտում էր Իրանում ռուսների առևտրին և, վախենալով մրցակցությունից, նրա հետ չկապված հայ առևտրականներին խանգարում առևտուր անել Ռուսաստանի և ռուսական տերիտորիայով Արևմուտքի հետ» Н. Г. Куканова. Экономические отношения России и Ирана в XVII—первой половине XIX века (Автореферат). Л., 1982, с. 27

26 Կ. Վ. Բազիլևիչը պարզել է, որ արդեն XVII դարի 60-ական թթ. գանձարանը, օտարերկրացիներին հետագա վերավաճառքի համար, ներքին շուկայում դնել է մի շարք ապրանքներ. տե՛ս К. В. Базилевич. Денежная реформа Алексея Михайловича и восстание в Москве в 1662 г. М.—Л., 1936, с. 54; Р. И. Козинцева. Участие казны во внешней торговле России в первой четверти XVIII в.—Исторические записки, т. 91, М., 1973, с. 326.

27 Տե՛ս Р. И. Козинцева. Участие казны..., с. 325—333

28 Р. И. Козинцева. Предложения российских купцов Санкт-петербургских жителей—источник для экономической истории второй четверти XVIII в.—Исследования по отечественному источниковедению. Сборник статей, посвященных 75-летию профессора С. Н. Валка. Л.—М., 1964, с. 304—308.

տալիստական հարաբերությունների սաղմնավորումը տեղի է ունեցել ավելի վաղ, քան կարծում են առանձին հետազոտողներ[23]։

Հայ և ռուս վաճառականության փոխհարաբերությունների որոշ առանձնահատկությունների պարզաբանման առումով անհրաժեշտ է նկատի ունենալ ազնվականական պետության քաղաքականությունը գյուղացիական առևտրի նկատմամբ։ Հետազոտելով այդ քաղաքականությունը (հարկ է նկատել, որ այստեղ հաճախ էին ընդհարվում Ռուսաստանի տարբեր խավերի, ինչպես նաև պետության հակադիր շահերը, որը ձգտում էր առևտրի ընդարձակումով ավելացնել իր եկամուտները), Ս. Մ. Տրոիցկին վերլուծում է այդ հարցում Գ. Ն. Տեպլովի՝ Եկատերինա II-ի վստահելի խորհրդականներից մեկի դիրքը[24]։ Բնութագրելով XVIII դարի կեսերին ռուսական վաճառականության վիճակը, Գ. Ն. Տեպլովը նշում էր նրա սակավարվությունը, փորձի, գիտելիքների և կապիտալի պակասը։ Նրա կարծիքով, վաճառականության մեծամասնությունը շահագրգռված էր գյուղացիական առևտրի պահպանմամբ և զարգացմամբ, այն ժամանակ, երբ վաճառականության վերնախավը, պաշտպանելով իր դասային շահերը, պայքարում էր գյուղացիական առևտրի արգելման համար։

Այսպիսով, այստեղ մենք տեսնում ենք, որ ռուսական վաճառականության տարբեր խավերի շահերը չէին համընկնում։ Այդ իրողությունը բանալի է տալիս բացահայտելու հայ վաճառականների հետ ռուսական վաճառականության վերնախավի մրցակցային պայքարի մեխանիզմը։ Պաշտպանելով իրենց դասային շահերը, վաճառականների այդ կատեգորիան միևնույն հեռանկարությամբ հանդես էր գալիս ինչպես առևտուր անող ռուս գյուղացիների, այնպես էլ օտարերկրյա կամ արևելյան վաճառականության դեմ՝ թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքերում աջակցության համար դիմելով բացարձակ միապետությանը։ Սակայն վերջինս բոլոր դեպքերում չէ, որ ընդառաջ էր գնում վաճառականության վերնախավի ցանկություններին։ Սաղմնավորվող ռուսական բուրժուազիայի նկատմամբ իր վերաբերմունքում այն ամենից առաջ ելնում էր պետության տնտեսական շահերից։ Եկատերինա II-ը համակրանքով էր վերաբերում Գ. Ն. Տեպլովի հայացքներին, որը հասկանում էր պետության քաղաքականության մեջ երկրի տնտեսական զարգացման օբյեկտիվ ընթացքի ավելի խոր հաշվառման անհրաժեշտությունը, որը նախատեսում էր գյուղացիական առևտրի համար ավելի բարենպաստ գործոնների ստեղծման անխուսափելիությունը։

Ինչ վերաբերում է հայ վաճառականությանը, ապա հարկ է նկատել, որ սկսած տակավին Ալեքսեյ Միխայլովիչ ցարից, հայ վաճառականության նրկասմամբ ռուսական բացարձակ միապետության հովանավորման քաղաքականության հիմքում ընկած էին ամենից առաջ պետության տնտեսական շահերը։ 1667 և 1673 թթ. Ջուղայի հայկական առևտրական ընկերության հետ մոսկովյան կառավարության պայմանագրերի կնքումից առաջ ռուսական վաճառականության բողոքները բացատրվում են նրանով, որ այն, պաշտպանելով սեփական դասային շահերը, միևնույն ժամանակ գերագնահատում էր իր ռեալ հնարավորությունները։ Մոսկովյան և աստրախանյան վաճառականների դժգոհությունը ուներ խիստ սուբյեկտիվ ենթատեքստ և բոլորովին էլ ռուսական վաճառականների նկատմամբ Ջուղայի հայերի վերաբերմունքի ար-

---

23 Ռուսաստանում կապիտալիզմի ավելի ուշ զարգացման տեսակետը առավել ամբողջական ձևով շարադրված է Ի. Ֆ. Գինդինի, Լ. Վ. Դանիլովայի, Ի. Դ. Կովալչենկոյի, Լ. Վ. Միլովի, Ա. Պ. Նովոսելցևի, Ն. Ի. Պավլենկոյի, Մ. Կ. Ռոժկովայի և Պ. Գ. Ռինձյունսկու «Ռուսաստանի անցումը ֆեոդալիզմից կապիտալիզմին» կոլեկտիվ զեկուցման մեջ. տե՛ս Переход от феодализма к капитализму в России. Материалы всесоюзной дискуссии. М., 1969, с. 5—103.

24 Տե՛ս С. М. Троицкий. Обсуждение вопроса о крестьянской торговле в Комиссии о коммерции в середине 60-х годов XVIII в. В кн.: С. М. Троицкий. Россия в XVIII в., с. 204—216.

դասիքը չէր[25]։ Դա հիանալի էր հասկանում Ալեքսեյ Միխայլովիչի կառավարությունը, իսկ հետագայում նաև՝ Պյոտր I-ը։ Այդ իսկ պատճառով պայմանագրերը կազմելու ժամանակ ռուսական վաճառականների բողոքները հաշվի չէին առնվում։ Մոսկովյան արքունիքը լավ գիտեր, որ այդ պայմանագրերը պետությանը կարող են տնտեսական շահ բերել, քանի որ ռուսական վաճառականությունը XVII դարի երկրորդ կեսին դեռ ի վիճակի չէր իր ուսերին կրելու արևելյան առևտրի և, մասնավորապես, մետաքսի առևտրի ողջ ծանրությունը։ Այն ժամանակ, երբ ռուսական վաճառականությունը միայն նոր էր ուժ հավաքում, պետությունը մի շարք ապրանքների վաճառքը դարձրեց իր մենաշնորհը։ Այդ երևույթը տեղի ունեցավ արդեն XVII դարի երկրորդ կեսին[26] և հատկապես աճեց XVIII դարի առաջին երեսնամյակում։ Պետությունն իր մենաշնորհը իրագործում էր նաև անմիջականորեն։ Կառավարական հաստատությունները ապրանքներ էին վաճառում առանձին արտահանողների կամ ընկերությունների։ Արտահանության հիմնական ապրանքներն ընկնում էին օտարերկրացիների ձեռքը։ Այդ անձանցից շատերը արևմտաեվրոպական ընկերությունների գործակալներ էին։ Ռուսական արքունիքում տարածված յուրօրինակ ֆավորիտիզմը, նույն անձանց կողմից պետական ապրանքներով առևտրի և պետական կապալների զավթումը հարուցում էր ոչ միայն ռուսական, այլև այն օտարերկրյա վաճառականների սուր դժգոհությունը, որոնք չէին մտնում ընտրյալների սահմանափակ շրջանակի մեջ[27]։

1727 թ. առևտրի հանձնաժողովին տված իրենց «Առաջարկություններում» պետերբուրգյան վաճառականները գրում էին. «Օտարերկրացիները իրավասու չեն ունենալու պետական կապալներ և գնումներ»։ Պայքարելով հանուն ամեն տեսակի մենաշնորհների վերացման, այդ թվում և ռուսական վաճառականների համար, նրանք նշում էին, որ «եթե ամեն մի առևտուր լինի շատ ձեռքերում, ապա ռուսական վաճառականները մյուս երկրներում էլ փառավոր վիճակում կլինեն»[28]։ Դա արդեն բողոք էր, չնայած և թույլ, բայց բոլոր դեպքերում առկա էր վաճառականության դժգոհությունը տարբեր տեսակի սահմանափակումներից, այդ թվում առևտրի պետական մենաշնորհից։

Սակայն այստեղ ուշագրավ է հետևյալը։ Հենց այդ նույն ժամանակաշրջանում, երբ ռուսական վաճառականությունը հանդես էր գալիս առևտրի մեջ օտարերկրացիների և սեփական պետության մենաշնորհի դեմ, ռուսական վաճառականության մի մասը (հիմնականում այն, որը կապված էր Ռու-

---

25 Ն. Դ. Կուկանովան «Ռուսաստանի և Իրանի տնտեսական հարաբերությունները XVII—XIX դդ. առաջին կեսին» դոկտորական դիսերտացիայում Ջուղայի և Անդրկովկասի հայերի առևտրական գործունեության մասին անելով մի շարք հետաքրքիր դիտումներ և ուշադրության արժանի եզրահանգումներ, սխալմամբ եզրակացնում է, որ «Ջուղայի ընկերությունը խոչընդոտում էր Իրանում ռուսների առևտրին և, վախենալով մրցակցությունից, նրա հետ չկապված հայ առևտրականներին խանգարում առևտուր անել Ռուսաստանի և ռուսական տերիտորիայով Արևմուտքի հետ» Н. Г. Куканова. Экономические отношения России и Ирана в XVII—первой половине XIX века (Автореферат). Л., 1982, с. 27.

26 Կ. Վ. Բազիլևիչը պարզել է, որ արդեն XVII դարի 60-ական թթ. գանձարանը, օտարերկրացիներին հետագա վերավաճառքի համար, ներքին շուկայում գնել է մի շարք ապրանքներ. տե՛ս К. В. Базилевич. Денежная реформа Алексея Михайловича и восстание в Москве в 1662 г. М.—Л., 1936, с. 54; Р. И. Козинцева. Участие казны во внешней торговле России в первой четверти XVIII в.—Исторические записки, т. 91. М., 1973, с. 326.

27 Տե՛ս Р. И. Козинцева. Участие казны..., с. 325—333.

28 Р. И. Козинцева. Предложения российских купцов Санкт-петербургских жителей—источник для экономической истории второй четверти XVIII в.—Исследования по отечественному источниковедению. Сборник статей, посвященных 75-летию профессора С. Н. Валка. Л.—М., 1964, с. 304—308.

ուստանի բարձրաստիճան վերնախավի հետ) իր վրա վերցրեց վաճառականների առևտրական ընկերությունների կազմակերպման նախաձեռնությունը, դրանով իսկ փաստորեն պաշտպանելով այն գաղափարը, որի դեմ նա հանդես էր գալիս։ Ռուսական վաճառականության այդ վարքագիծը հարկ է բացատրել ոչ թե հետևողականության բացակայությամբ, այլ ինքնահաստատման յուրօրինակ փորձով։

Զուտ ռուս վաճառականների ընկերություններ ստեղծելու առաջին անհաջող փորձերը[29] հանգեցրին խառը (հայկականի հետ) առևտրական ընկերությունների ստեղծմանը, որոնք կոչված էին Արևելքի երկրների հետ առևտուր անելու։ Այդ է վկայում Պյոտր I-ի գինակից Ֆ. Ի. Սոյմոնովի աշխատությունը։ Ֆ. Ի. Սոյմոնովը Կասպից ծովի արևմտյան ափի նկարագրությունը տալուց բացի ուսումնասիրել է իրանական առևտրի վիճակը։ Հայերի հետ միասին ընկերություններ կազմակերպելու իրենց մտադրությունները ռուս վաճառականները հիմնավորում էին նրանով, որ հայ վաճառականները ուրիշներից լավ են կարողանում Արևելքի երկրներում շահավետ առևտուր կատարել[30]։ Այստեղ կարևոր է նկատել, որ հայերի հետ տնտեսական համագործակցության հարցն առաջին անգամ դրել են ռուս վաճառականները[31]։ Սակայն գլխավորապես ռուսական վաճառականության թուլության պատճառով XVIII դարի առաջին կեսին ռուս-հայկական առևտրական ընկերություններ չստեղծվեցին։ Այդ գաղափարը գործնականում իրականացվեց միայն ռուսական վաճառականության ուժեղացման շնորհիվ, XVIII դարի կեսերին և երկրորդ կեսին։ Հետևաբար, ռուս-հայկական վաճառականական առևտրական ընկերությունների ստեղծման գաղափարն ամբողջ XVIII դարի ընթացքում չմարեց։ Դարի երկրորդ կեսի սկզբին կազմակերպվեց Պարսկաստանի հետ առևտրի համար ռուս-հայկական ընկերություն, որի գլուխ կանգնած էին հայ վաճառական եղբայրներ Իսախանովները։ Այդ ընկերությունը, սակայն, գոյություն ունեցավ ոչ երկար և XVIII դարի 60-ական թթ. սկզբներին դադարեցրեց իր գոյությունը։ Այդպիսի հաստատություն ստեղծելու երկրորդ փորձը կատարվեց 1770-ական թթ.։ Ընկերության ստեղծման պլանը շարադրված և փաստարկված էր պրոֆեսոր Ս. Գ. Գմելինի «Ծանոթություններ կաս-

---

29 1763 թ. ծովափների ձարպի, ծովային կենդանիների կաշվի և որոշ այլ ապրանքների արտահանման իրավունքը տրվեց այն ընկերությանը, որի մեջ էին մտնում Ա. Դ. Մենշիկովը, Պավել և Պյոտր Շաֆիրովները, Ի. Գրիգորևը և Ս. Կոպևը։ Սակայն այդ ընկերությունը տնտեսապես իրեն չարդարացրեց և այդ իսկ պատճառով կառավարությունը 1721 թ. որոշեց Մ. Գ. Եվրեինովի գլխավորությամբ կազմակերպել առևտրական նոր ընկերություն և 1722 թ. հունվարի 1-ից նրան 30 տարով արտոնություն տալ։ Սակայն մեկ տարի անց կառավարությունը վերանայեց իր որոշումը. ձարպի և ծողաձկան արդյունահանումը, վաճառքն ու արտահանումը ազատ հայտարարվեցին։ Տե՛ս ПСЗ, т. IV, № 1988; Р. Н. Козинцева. Участие казны..., с. 321—322; М. Чулков. Историческое описание Российской коммерции. Т. 1, кн. 2, с. 26—27, 344—361.

30 Տե՛ս Ф. И. Соймонов. Описание Каспийского моря и чиненных на оном российских завоеваний, яко часть истории государя императора Петра Великого, под ред. Г. Ф. Миллера. СПб, 1763; Р. Хачатрян. Русско-армянские отношения при Петре I в освещении русских историков.—Вестник общественных наук АН АрмССР, 1977, № 5.

31 Այսպիսով, ռուսական վաճառականության հիմնական մասը հայ վաճառականների նկատմամբ միանգամայն լոյալ գիրք էր գրավել, ճիշտ այնպես, ինչպես առևտուր անող ռուս գյուղացիների նկատմամբ, որը լուսաբանվել է Ս. Մ. Տրոիցկու կողմից մի հոդվածում, որտեղ հետաքրքրվել է ազնվականական պետության քաղաքականությունը գյուղացիական առևտրի հարցում. տե՛ս С. М. Троицкий. Обсуждение вопроса о крестьянской торговле..., с. 204—216.

պիական առևտրի մասին» գրառումներում[32]։ Ս. Գ. Գմելինի գրառումներից հետևում է, որ հայերի ու ռուսների առևտրական համագործակցության գաղափարը հեղինակին հուշել էին ռուս վաճառականները։

XVIII դարի 60-ական թթ. սկզբին ծագում է Թուրքիայի հետ առևտուր անելու համար Տեմերնիկովյան նավահանգստում ընկերություն ստեղծելու գաղափարը։ Այն առաջ քաշեց եկատերինյան դարաշրջանի նշանավոր մեծատոհմիկ կոմս Ի. Ի. Վորոնցովը։ 1761 թ. հունիսի 21-ին նա սենատին ներկայացրեց «Պարսկաստանի հետ առևտուրը բարելավելու մասին» նախագիծ, որի մեջ Ղղլարին ազատ առևտրի իրավունք տալու առաջարկության հետ մեկտեղ խոսվում էր նաև Թուրքիայի հետ առևտրի համար ընկերության ստեղծման մասին[33]։ Հայտնի է, որ այդպիսի ընկերություն ստեղծվեց և նրա գլուխ կարգվեց նշանավոր հայ վաճառական և ձեռնարկատեր Վ. Խաստատովը։ Ընկերությունը գոյություն ունեցավ մի փոքր ավելի երկար, քան Իսախանով եղբայրներինը։ Բայց այն ևս ժամանակի ընթացքում դադարեց գոյություն ունենալ։

Այսպիսով, ռուս-հայկական խառը առևտրական ընկերությունների ստեղծմանը նպաստող պատճառներից մեկը ռուսական վաճառականության տնտեսական հզորության աճն էր։ Սակայն այդ պրոցեսը ժամանակի ընթացքում դրսևորվեց իր բացասական կողմով։ Եթե ռուսական վաճառականության մի մասը կարողացավ XVIII դարի երկրորդ կեսին տնտեսական համագործակցության մեջ մտնել հայ վաճառականների հետ (խառը ընկերությունների ստեղծում), ապա այդ նույն ժամանակամիջոցում ամրապնդված ռուսական վաճառականության հիմնական մասը ակտիվորեն հանդես էր գալիս այդ ընկերությունների դեմ։ Համոզվելու համար այն բանում, որ ռուսական վաճառականությունը տվյալ դեպքում չէր շոշափում հայերի և ռուսների տնտեսական համագործակցության գաղափարը, այլ միայն պայքարում էր ամեն տեսակի մենաշնորհների վերացման համար, հարկ է պարզել ոչ միայն ռուս-հայկական առևտրական ընկերությունների, այլև XVIII դարի երկրորդ կեսի նման այլ ձեռնարկությունների համեմատաբար կարճատև գոյության պատճառները։ Ուստի անհրաժեշտ է կրկին անդրադառնալ ռուս սովետական պատմաբանների աշխատություններին։

Ակադեմիկոս Մ. Ն. Դրուժինինը Ռուսաստանում լուսավորյալ բացարձակ միապետությանը նվիրված աշխատության մեջ խոսելով XVIII դարի երկրորդ կեսի մասին, նշել է, որ Եկատերինա II-ը իր ծրագրային փաստաթղթում՝ «Հրահանգում», վճռականորեն հանդես է գալիս ընդդեմ մենաշնորհների պահպանման, հանուն առևտրի ու արդյունաբերության ազատության[34]։ Կայսրուհին համոզված էր, որ «առևտուրը հեռանում է այնտեղից, որտեղ նրան ճնշում են և հասնում է այնտեղ, որտեղ նրա հանգիստը չեն խանգարում»[35]։ Սրան պետք է ավելացնել նաև այն, որ XVIII դարի երկրորդ կեսի Ռուսաստանի արտաքին ակտիվ քաղաքականությունը հարկադրեց կառավարությանը փոփոխություններ մտցնել տնտեսական քաղաքականության ասպարեզում։ Ռուսաստանում առևտրի զարգացման մասին սենատար Ն. Ե. Մուրավյովի «Պաշտոնագրի» վերաբերյալ աշխատության մեջ Ս. Մ. Տրոիցկին նշում է, որ 7-ամյա պատերազմի (1756—1763) ընթացքում կանձարանի ֆինանսա-

---

32 Ս. Գ. Գմելինը գիտության կայսերական ակադեմիայի առաջադրանքով 1768—1774 թթ. մեծ ճանապարհորդություն կատարեց Դոնի ավազանում, Վոլգայի ստորին հոսանքի շրջանում, Կովկասում և Կասպից ծովի առափնյա վայրերում։ Նա այցելեց նաև Իրան։ «Գրառումները» գրվել էին ճանապարհորդության ժամանակ։

33 Ռ. Ի. Կորոնցովի նախագիծը սովետական պատմաբաններից առաջինը հետազոտել է Ս. Մ. Տրոիցկին։ Տե՛ս С. М. Троицкий. Финансовая политика..., с. 85—87.

34 Տե՛ս Н. М. Дружинин. Просвещенный абсолютизм в России. В кн.: Абсолютизм в России (XVII—XVIII вв.), М., 1964, с. 440.

35 Наказ имп. Екатерины II, данный Комиссии о сочинении проекта нового уложения, под ред. Н. Д. Чечулина. СПб, 1907, с. 317.

կան դժվարությունները կտրուկ աճեցին[36]։ Կառավարությունը, բնականաբար, ձգտում էր ներքին փոխառություններ ստանալ։ Ինչպես նշում է Մ. Պ. Պավլովա-Սիլվանսկայան, փոխառությունը տեսականորեն կարող էր տարաբաշխվել ի հաշիվ վաճառականական կապիտալների։ Սակայն ճորտատիրական սիստեմը ծայրահեղ դանդաղեցնում էր Ռուսաստանում կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը։ Ռուսական վաճառականությունը, որը տիրում էր համեմատաբար ոչ մեծ կապիտալների, շարունակ կանխիկ դրամի սուր պակաս էր զգում։ Դա հետևանք էր կապիտալների դանդաղ շրջանառության (տարեկան մեկ անգամ, կամ երկու տարին մեկ)[37]։ Այդ հանգամանքները, գրում է Ս. Մ. Տրոիցկին, ինչպես նաև արդյունաբերության ու առևտրի պահանջարկներն ավելի հաշվի առնելու ձգտումը, որում շահագրգռված էր ազնվականական պետությունը, հանգեցրին որոշ մենաշնորհների վերացմանը[38]։ Տվյալ միտքն իր զարգացումն է գտել Ս. Մ. Տրոիցկու մի այլ աշխատության մեջ, որտեղ հետազոտվում են Ռուսաստանում հատուկ խավի ստեղծման նախագծերը[39]։ Այստեղ Ս. Մ. Տրոիցկին կանգ է առնում Գ. Ն. Տեպլովի հայացքների վրա, որոնք բաժանում էր Եկատերինա II-ի կառավարությունը[40]։ Գ. Ն. Տեպլովի հանձնաժողովի նախագծերում քննարկվում էին երկրի տնտեսության զարգացման համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցառումները։ Գ. Ն. Տեպլովը վաճառականական առևտրական ընկերությունների հակառակորդն էր և հանդես էր գալիս հանուն ազատ առևտրի։ Նա անհրաժեշտ էր համարում ռուսական վաճառականության բոլոր խավերին դնել հավասար պայմանների մեջ։

Կառավարության կողմից առևտրի վիճակը բարելավելու հարցի քննարկումը, ինչպես նաև այդ ուղղությամբ ձեռնարկված որոշ պրակտիկ քայլերը (այդ թվում առևտրական ընկերությունների վերացումը) արտացոլում էին այն խոր տեղաշարժերը, որոնք XVIII դարում տեղի ունեցան երկրի տնտեսության մեջ, կապիտալիստական կացութաձևի ձևավորման կապակցությամբ։

---

36 *Տե՛ս* С. М. Троицкий. Записка сенатора Н. Е. Муравьева о развитии коммерции и путей сообщения в России (60-е годы XVIII в.). В кн: Историческая география России XII—начала XX в. М., 1975, с. 243.

37 *Տե՛ս* М. П. Павлова-Сильванская. К вопросу о внешних долгах России во второй половине XVIII в., с. 330; В. Н. Яковцевский. Купеческий капитал в феодально-крепостнической России. М., 1953, с. 108—109.

38 *Տե՛ս* С. М. Троицкий. Записка сенатора Н. Е. Муравьева..., с. 243.

39 *Տե՛ս* С. М. Троицкий. Дворянские проекты создания «третьего чина». В кн.: Россия в XVIII в., с. 192—204.

40 *Ռուսաստանում առանձին խավի ստեղծման և երկրում առևտրի վիճակի հարցերը քննարկվել են հատուկ հանձնաժողովում՝ Առևտրի հանձնաժողովում, որի ստեղծման պատմությունը համառոտ այսպիսին է. այն 1758 թ. կոմս Պ. Ի. Շուվալովի առաջարկությամբ հիմնադրեց կայսրուհի Ելիզավետա Պետրովնան։ Հանձնաժողովը պետք է քննարկեր վաճառականության պահանջները և գտներ առևտրի բարելավման եղանակներ, սակայն հանձնաժողովը կարճատև գոյություն ունեցավ և չկատարեց իր խնդիրները։ Առևտրի վիճակը և քաղաքային բնակչության կացությունը քննարկելու նոր փորձը կապված էր 1763 թ. դեկտեմբերին Եկատերինա II-ի ստեղծած Առևտրի հանձնաժողովի հետ, որը ենթարկվում էր կայսրուհուն և նիստեր էր գումարում Ձմեռային պալատում։ Նրա կազմի մեջ ընդգրկված էին Եկատերինա II-ի վստահությունը վայելող ականավոր պետական գործիչներ՝ սենատորներ Ի. Ի. Նեպլյուևը և Լ. Պ. Շախովսկոյը, կամերգեր կոմս Ա. Պ. Շուվալովը, մաքսատների գլխավոր դիրեկտոր կոմս Է. Միհիխը, արդարադատության կոլեգիայի վիցե-պրեզիդենտ Տ. ֆոն Կլինգշտատը։ Հանձնաժողովի փաստական ղեկավարն էր խնկական ավագ խորհրդական և կայսրուհու քարտուղար Գ. Ն. Տեպլովը. տե՛ս* С. М. Троицкий. Россия в XVIII веке, с. 193; Н. Л. Рубинштейн. Уложенная комиссия 1754—1766 гг. и ее проект нового уложения «О состоянии подданных вообще» (К истории социальной политики 50-х—начала 60-х годов XVIII в.).—Исторические записки. т. 38, М., 1951.

Եվ այդ սոցիալ-տնտեսական պրոցեսին մասնակցեց նաև հայկական առևտրաարդյունաբերական կապիտալը։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ռուս սովետական պատմաբանների աշխատությունները, որոնք նվիրված են Ռուսաստանում բացարձակ միապետության պատմությանը, մեծ արժեք են ներկայացնում XVIII դարի Հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների պատմության որոշ տեսական հարցերի ուսումնասիրության առումով և կարող են այդ պրոբլեմը հետազոտողներին նշանակալի օգնություն ցույց տալ։

ИСТОРИОГРАФИЯ РУССКОГО АБСОЛЮТИЗМА И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЯНО-РУССКИХ ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ В XVIII ВЕКЕ

Ж. А. АНАНЯН

Резюме

Вопросы социально-экономической истории России XVII—XVIII вв. исследованы в работах таких видных советских историков, как Н. М. Дружинин, С. М. Троицкий, А. А. Преображенский, Н. И. Павленко, С. Я. Боровой, М. Я. Волков, Ю. А. Тихонов, А. И. Юхт, Н. Г. Куканова и др. В статье показано, как ряд проблем истории российского абсолютизма, освещенных в трудах русских советских историков, в теоретическом аспекте находят отражение при изучении некоторых вопросов истории армяно-русских торгово-экономических отношений в XVIII в. Мы приходим к следующим выводам.

1. Торговые связи между армянскими и русскими купцами существовали со времен Киевской Руси и позже, в период становления Московского государства в XIV—XVI вв. Однако эти связи не вылились тогда в экономические отношения. Армяно-русские торгово-экономические отношения возникли лишь с началом в XVII в. «нового периода» русской истории, связанного с возникновением национального рынка и капиталистических отношений и проведением политики меркантилизма.

2. Покровительственная политика России в отношении армянских и некоторых других восточных купцов, начиная с Алексея Михайловича вплоть до Петра I и несколько позже, являлась составной частью русской экономической политики, видное место в которой занимала политика меркантилизма.

3. Одной из причин, способствоваших созданию в 1750—60-х гг. смешанных русско-армянских торговых компаний, было возрастание экономического потенциала русского купечества. Этот процесс со временем обернулся своей негативной стороной. Если часть верхушки русского купечества во второй половине XVIII в. начала сотрудничество с армянскими купцами (создание смешанных компаний), то окрепшая к тому времени основная масса русского купечества активно выступила против таких компаний. Однако русское купечество вовсе не затрагивало идеи экономического сотрудничества армян и русских, оно лишь боролось за отмену всяких монополий в торговле.

4. История предпринимательства известной армянской семьи Лазаревых свидетельствует о том, что со второй половины XVIII в. начинается процесс постепенного врастания (вживания) верхушки армянского купечества в организм русской экономики, что привело к более форсированному перерастанию армянского купеческого капитала в промышленный. Причем если этот процесс в первой половине XVIII в. лишь намечался и охватывал преимущественно армянские колонии России, то в последней трети XVIII в. он уже завершился, и армянский торгово-промышленный капитал вышел за пределы тех экономических центров, где традиционно была сосредоточена предпринимательская деятельность армян.

5. Во второй половине XVIII в. в экономике феодальной России в связи с формированием капиталистического уклада происходят глубокие сдвиги. В этом социально-экономическом процессе принимал участие и армянский торгово-промышленный капитал.